ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ազգիս Վեհափառ Հայրապետը իր ջերմագին շնորհակալություն է հայտնում Մայր Աթոռիս բարերարներ Տիարք Ճորճ և Ճոնի Քյուրքճյաններին, այն բացառիկ հոգատար վերաբերմունքի համար, որ վայելեց Նորին Սրբությունը՝ նրանց կողմից Փարիզի Hôtel Dieu հիվանդանոցում գտնված ժամանակ Պրոֆ. Բերնադուի տևական հսկողության ներքև: Վեհափառ Հայրապետը իր մասնավոր գնահատանքն է հայտնում Տիար Ճորճ Քյուրքճյանին և Տիկին Դայանա Քյուրքճյանին՝ տևապես նրանց որդիական հուժ հոգատար վերաբերմունքի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր ջերմ գոհունակություն է հայտնում Փարիզի Հայոց Եկեղեցական Վարչության և հատկապես Փարիզի Առաջնորդ և Ֆրանսիայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Գյուտ Արքեպիսկոպոս Նագգաշյանի բացառիկ ուշադիր վերաբերմունքի համար հիվանդանոցում նրա գտնվելու օրերին՝ 24 Մայիսից մինչև 8 Հունիս:

Թող Տերը քաջառողջ ու երկար կյանք պարգևի նրանց բոլորին եկեղեցաշեն գործոց հաջողությամբ և ընտանեկան երջանկությամբ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 Հունիս 1994